

թելի հեռագրել մինչեւ 18,000 մետր հեռ
ռաւորովեան վրայ, որ քիչ բան ըսել չէ:
Անցեալ տարւոյն նոյեմբերի մէջ՝ դերմա-
նիայէն նորանոր փորձերու ըուբեր հասան,
որոց մէջ 3000 մետրի յաելուած մ'ալ ե-
ղած էր վերպաշեալ հեռաւորովեան վրայ,
ուստի 21,000 մետրի կը հասնէինք. և վեր-
ջեր լրագիրը ծանացին այդ հեռաւորովեան
աւելնալը մինչեւ 75,000 մետր, և ու յա-
ռաջ քաշելու վրայ ենց: Պէտք է զիտել նաև
որ այս վերջին փորձերը կատարուեցան մթնո-
լորտային ոչ յաջող պարագաներու մէջ¹,
Մարինիի բացակայութեամբ և Գերմանացի
ժողովրդեան առջեւ, զորս գոհ ընելը զիտին
բան չէ: — Ուրեմն յոց կայ աւելին միշտ
ընդունելու ապացային մէջ. զիտս մը զբա-
նուելին վերը ամէն հանճար նոյնը կատա-
րելագործելու կ'աշխատի: Առաջին անգամ
Անգիոյ մթին հանդերուն մէջ հարիր մետր
երկայնութեամբ երկաթուղին հաստատողը
չէր կարող անշուշտ հաւատալ որ իր փոքրիկ
գիտան այնչափ մեծ կարեւորութիւն պիտի
ստանար. բայց այն զիտօվ՝ արգին երկա-
թուղին դանաւած էր, որ այսօր քաղաքա-
կանացեալ երկրին ամբողջութիւնը ցանցի մը
պէս պատասած է:

Ա. 8.

1. Նախընթացաբար կատարուած եւ ու վեր-
ջին փորձերով յայտնուեցաւ որ ոչ անձրեւք,
ոչ հողմունք և ոչ ուրիշ բնութեան երեւոյթք՝
չեն արդեւուր ելեկարական ալեաց ընթացքը:



ՏԱՐՕՐԻՆԱԿԱ ԿԵՐՊ

Խճէ ԽԱՅԹՈՒԱՇ ԱՐՁԵՎԱՅ ՄԻ ՍԱՐՈՂԱՑԱՎԱԼՈՒ

ԱՏԱԼԱԿԱՆ լրագիր մը հետեւեալ գեպ-
ըը կը պատմէ, հաւաստի աղբիրէ քաղելով,
որ կրնայ օգտակար լինել մեր երկրին շատ
գաւառներուն համար, եթէ տեղացիք լաւա-
գոյն զարման ընել չգիտեն:

Նապոլիի գաւառին մէջ՝ կազերտայի բո-
վերը գտնուող Ծակալէ զիւղին մէջ աղջիկ
մը խայթուեցաւ իմէ մը: Քանի մը ժամ
վերջը՝ երբ բժշկներն այցելութեան գնացին՝
յայտարարեցին թէ բանը բանէն անցած էր,
ալ ապրելու յօյս չկար: Այն ժամժանակ՝ աղ-
ջիկան հայրը յիշեց հին բժկութեան կերպ
մը, զոր նմանօրինակ զէպբի մէջ ի զործ զրած
էր իւր պապը, և բնակ տաշտաթաղ ըրաւ
իւր աղջիկը, այսինքն՝ մինչեւ զիկը գետնի
մէջ թաղեց, որուն սրունցները կարէ զուրս
ուած տկուած էին. Հակառակ կենալով նաեւ
վարչական անձանց տեղոյն, որը այդպիսի
տարօրինակ զարմանէ մը ետ կեցնել կ'ու-
զէին զինքը. բայց հայրը մտիկի չընելով ա-
նոնց արգիլիչ հրամաններուն, ամբողջ բաւ-
նըշորու ժամ՝ կիսաթաղ պահեց իւր զուսարը.
յետոյ զուրս հանեց, և ամենուն ապշութիւն
և հիացումն ազգեց՝ երբ տեսան որ աղջիկը
բոլորվին առողջացեր էր: — Այս զէպբը
պաշտօնապէս հաստատուեցաւ տեղոյն բա-
զաբական պահանորդներէն և պըետորէն:

*
* *

ԶԱՅՆ ՍՐԸ

Ֆիրենցէի մէջ հրատարակուած լրագիր մը
**մեզի համար հետեւեալ հետաքրքրական տե-
ղեկութիւնը կը հաղորդէ:**

« Ծեկըիոյ Հմիլիա: — Մարտ ամիսին ի
վեր կը հրատարակուի երկամնեայ Հանգէս
մը Զայն Սրտի վերնազրով, որուն նպատակն